ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈԶԻՏԻՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության, քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս, նույն ամբիոնի հայցորդ, ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի մագիստրոս
DOI: 10.63925/18294847-2026.blj22-06

Ամփոփագիր: Սույն հոդվածում ուսումնասիրվում են երեխաների իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության հիմնական մոտեցումները՝ համադրելով տարբեր պետությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Լեհաստանի, Պորտուգալիայի, Հարավաֆրիկյան Հանրապետության և Ֆրանսիայի փորձը: Վերլուծվում են երեխաների իրավունքների սահմանադրական պաշտպանության առանձնահատկությունները, պետության պոզիտիվ պարտավորությունների սահմանադրական ամրագրումը, ինչպես նաև անչափահասների նկատմամբ մասնագիտացված արդարադատության նշանակությունը:

Հոդվածում առանձին անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրված՝ երեխայի լավագույն շահի և երեխայի կարծիքն արտահայտելու իրավունքի երաշխիքներին: Ուսումնասիրության արդյունքում հիմնավորվում է երեխայի լավագույն շահի սկզբունքի օրենսդրական հստակեցման անհրաժեշտությունը և դրա բովանդակության ու գնահատման չափանիշների ամրագրումը ՀՀ Ընտանեկան օրենսգրքում՝ երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետությունն ու իրավակիրառ պրակտիկայի կանխատեսելիությունը բարձրացնելու նպատակով:

Բանալի բառեր. երեխայի իրավունքներ, սահմանադրաիրավական պաշտպանություն, երեխայի լավագույն շահ, պոզիտիվ պարտավորություններ, անչափահասների արդարադատություն, մասնագիտացված արդարադատություն:

Ներածություն

Երեխայի իրավունքների պաշտպանությունը ժամանակակից սահմանադրական պետության հիմնարար պարտավորություններից է և իրավական պաշտպանության կարևորագույն երաշխիքը:

Սահմանադրական ամրագրումը կարևոր է ոչ միայն իրավական, այլև խորհրդանշական տեսանկյունից, քանի որ այն երեխաներին հաստատում է որպես ինքնուրույն իրավունքների սուբյեկտներ[1] և նրանց իրավունքները ներառում է պետության բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթում՝ Սահմանադրության մեջ: Միևնույն ժամանակ, սահմանադրական պաշտպանությունն ունի նաև գործնական նշանակություն, քանի որ Սահմանադրության գերակայության սկզբունքը ենթադրում է, որ պետական իշխանության մարմինների գործունեությունը, այդ թվում՝ ընդունվող օրենսդրությունը, պետք է համապատասխանեն սահմանադրական պահանջներին:

Սահմանադրության մեջ համապասխան դրույթների առկայությունը երաշխավորում է, որ պետական մարմինները հեշտությամբ չեն կարող փոփոխել իրավունքների բացահայտ սահմանադրական պաշտպանությունը: Երեխաների իրավունքների ուղղակի և բացահայտ սահմանադրական պաշտպանությունը վերացնում է երեխաների նկատմամբ ընդհանուր մարդու իրավունքների կիրառելիության վերաբերյալ անորոշությունները և միաժամանակ կանխում է այն իրավիճակը, երբ առաջնահերթությունը ոչ թե երեխաների իրավունքներին է տրվում, այլ չափահասներին:

Աշխարհի պետությունների մեծամասնության կողմից Միավորված ազգերի կազմակերպության՝ 1989 թվականի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի վավերացումը (այսուհետ՝ «Կոնվենցիա»)[2] վկայում է երեխաների իրավունքների համընդհանուր ճանաչման և դրանց պաշտպանության միջազգային պարտավորության ձևավորման մասին: Այսպես օրինակ՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից 45-ը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է

[1] Տ՛ես O'Mahony, C., "The Promises and Pitfalls of Constitutionalizing Children's Rights", in J. G. Dwyer (ed.), The Oxford Handbook of Children and the Law (Oxford: Oxford University Press, 2020), էջ 871 https://doi.org/10.1093/oxfordhb/9780190694395.013.40 (մուտք՝ 09.08.2026).

[2] Տ՛ես United Nations, Convention on the Rights of the Child, United Nations Treaty Series, Vol. 1577, p. 3, 1989, Convention on the Rights of the Child | OHCHR (մուտք՝ 09.08.2026).

սույն Կոնվենցիան՝ հավատարիմ լինելով երեխաների իրավունքների միջազգային պաշտպանության առաքելությանը:

Միաժամանակ նշենք՝ երեխաների իրավունքների սահմանադրական պաշտպանության հարցում պետությունների մոտեցումները, այնուամենայնիվ, միատեսակ չեն. էական տարբերություններ են դրսևորվում ինչպես սահմանադրական ամրագրման ծավալի, այնպես էլ նախատեսված իրավական պաշտպանության մեխանիզմների բնույթի և արդյունավետության առումով:

Հիմնական հետազոտություն

Երեխայի իրավունքների՝ Սահմանադրության մակարդակով ամրագրումն ինքնին դեռևս չի վկայում դրանց լիարժեք և արդյունավետ պաշտպանության մասին, քանի որ էական նշանակություն ունի այն, թե ինչպիսի իրավունքներ են ճանաչվում, ինչ պարտավորություններ են սահմանվում պետության համար և ինչ իրավական մեխանիզմներ են նախատեսվում դրանց իրականացման ու պաշտպանության համար:

Համեմատական-իրավական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք պետությունների սահմանադրություններ երեխաների իրավունքները կարգավորում են առանձին և ուղղակիորեն՝ ամրագրելով երեխային վերաբերող հատուկ իրավունքներ և պետության համապատասխան պարտավորություններ, մինչդեռ այլ իրավակարգերում երեխաների սահմանադրական պաշտպանությունը հիմնականում իրականացվում է ընդհանուր մարդու իրավունքների և ընտանիքի պաշտպանության վերաբերյալ սահմանադրական դրույթների միջոցով:

Այսպես, Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում պետության պոզիտիվ պարտավորության սահմանադրական ամրագրման օրինակ է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը: Մասնավորապես, ՌԴ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «մայրությունը, մանկությունը և ընտանիքը գտնվում են պետության պաշտպանության ներքո»:[3] Նշված դրույթը պետության համար նախատեսում է ոչ միայն երեխայի իրավունքներին և օրինական շահերին ապօրինի միջամտելուց ձեռնպահ մնալու պարտականություն, այլև դրանց

[3] Տես Конституция Российской Федерации от 12 декабря 1993 г. (с изм. и доп.) // «Российская газета», 1993, էջ 38 Конституция Российской Федерации" (принята всенародным голосованием 12.12.1993 с изменениями) \ КонсультантПлюс (մուտք՝ 10.08.2026)

պաշտպանությանն ու ապահովմանն ուղղված ակտիվ միջոցների ձեռնարկման սահմանադրական պարտավորություն:

Հետաքրքրական է Լեհաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված հետևյալ իրավակարգավորումը. համաձայն Սահմանադրության 72-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Լեհաստանի Հանրապետությունն ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը: Յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահանջելու պետական իշխանության մարմիններից երեխայի պաշտպանությունը բռնությունից, դաժան վերաբերմունքից, շահագործումից և բարոյական ապականումից»: Նույն հոդվածի 3-րդ մասով ճանաչում է երեխայի սուբյեկտայնությունը և դրանից բխող իրավունքները, իսկ 4-րդ մասով կարգադրում է երեխաների հարցերով օմբուդսմենի գրասենյակի ստեղծումը:[4]

Այսպիսով՝ Լեհաստանի Հանրապետության Սահմանադրության 72-րդ հոդվածը երեխայի իրավունքների պաշտպանության բարձր մակարդակի սահմանադրական երաշխիք է, քանի որ ամրագրում է ոչ միայն պետության ընդհանուր պարտականությունը, այլև կոնկրետ պոզիտիվ պարտավորություններ՝ երեխայի պաշտպանությունը բռնությունից և շահագործումից, պետական խնամքի ապահովումը, երեխայի կարծիքի լսումը և այլն:

Լեհական մոդելի առանձնահատկությունը պետության պոզիտիվ պարտավորության սահմանադրական «բազմաշերտ» կառուցվածքն է. Սահմանադրությունը միաժամանակ ամրագրում է պաշտպանության ընդհանուր պարտականություն, հատուկ պաշտպանական միջոցների նկատմամբ երեխայի իրավունքը, երեխայի մասնակցության երաշխիքը և մասնագիտացված պետական ինստիտուտի ստեղծման պարտավորությունը:

Նշենք, որ Պորտուգալիայի Հանրապետության Սահմանադրության 69-րդ հոդվածը նույնպես նախատեսում է երեխայի իրավունքների պաշտպանության ուղղակի սահմանադրական երաշխիքներ: Մասնավորապես, այն երեխաներին վերապահում է հասարակության և պետության կողմից հատուկ պաշտպանության իրավունք՝ նրանց լիարժեք և համակողմանի զարգացման ապահովման նպատակով՝

[4] Տ՛ես Constitution of the Republic of Poland, adopted by the National Assembly on 2 April 1997, Article 72 https://www.sejm.gov.pl/prawo/konst/angielski/konse.htm (մուտք՝ 10.08.2026)

ներառյալ լքվածությունից, խտրականությունից, շահագործումից և բռնության ու խնամակալական լիազորությունների չարաշահման այլ ձևերից պաշտպանությունը: Առանձին սահմանադրական պաշտպանություն է նախատեսվում նաև որբ, լքված և ընտանեկան միջավայրից զրկված երեխաների համար՝ պետությանը պարտավորեցնելով ապահովել նրանց արժանապատիվ կենսապայմանները, անհրաժեշտ խնամքն ու զարգացման հնարավորությունները:[5]

Այսպիսով՝ Պորտուգալիայի սահմանադրական մոդելում երեխայի պաշտպանությունը դրսևորվում է պետության հստակ պոզիտիվ պարտավորությունների միջոցով՝ ընդգրկելով ոչ միայն երեխայի պաշտպանությունը վնասակար միջամտություններից, այլև նրա բնականոն զարգացման համար անհրաժեշտ պայմանների ակտիվ ապահովումը:

Հետազոտող Քոնոր Մահոնին իր ուսումնասիրություններում համեմատական մակարդակում առանձնացնում է երեխայի իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության առավել ընդգրկուն և առավել սահմանափակ մոդելներ՝ շեշտադրելով Հարավաֆրիկյան Հանրապետության փորձը[6]: Առավել զարգացած մոդելներից հեղինակը վերլուծում է Հարավաֆրիկյան Հանրապետության Սահմանադրության 28-րդ բաժնով նախատեսված կարգավորումը, որը երեխաներին վերապահում է հատուկ իրավունքների լայն շրջանակ՝ ներառյալ ընտանեկան կամ ծնողական խնամքի, այլընտրանքային խնամքի, հիմնական սննդի, կացարանի, առողջապահական և սոցիալական ծառայությունների, ինչպես նաև վատ վերաբերմունքից, անտեսումից, բռնությունից և շահագործումից պաշտպանության իրավունքները:[7] Միաժամանակ, սահմանադրական կարգավորումը նախատեսում է երեխայի լավագույն շահերի առաջնահերթությունը երեխային վերաբերող յուրաքանչյուր հարցում և առանձին երաշխիքներ՝ երեխայի ազատությունից զրկման դեպքերի համար:

---

[5] Տ՛ես Constitution of the Portuguese Republic, adopted on 25 April 1976, Article 69 https://www.parlamento.pt/Legislacao/Paginas/ConstituicaorepublicaPortuguesa.aspx (մուտք՝ 10.08.2026)

[6] Տե՛ս Conor O'Mahony, "Why Children Should Have Constitutional Rights of Their Own," *International Journal of Constitutional Law*, Vol. 23, Issue 2, 2025, էջ 372–404, https://doi.org/10.1093/icon/moaf034 (մուտք՝ 12.08.2026)

[7] Տե՛ս Constitution of the Republic of South Africa, 1996, Article 28 https://www.gov.za/documents/constitution/constitution-republic-south-africa-1996-04-feb-1997 (մուտք՝ 12.08.2026)

Հարավաֆրիկյան մոդելի առանձնահատկությունն այն է, որ երեխայի իրավունքների սահմանադրական ճանաչումը զուգորդվում է պետության կոնկրետ պոզիտիվ պարտավորությունների հետ: Հետևաբար, տվյալ կարգավորումը կարելի է դիտարկել որպես այնպիսի սահմանադրական պաշտպանության օրինակ, որտեղ պետության դերը չի սահմանափակվում երեխայի իրավունքների ճանաչմամբ, այլ ներառում է դրանց իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:[8]

Հարավաֆրիկյան կարգավորման առանձնահատկություններից է նաև այն, որ արտակարգ դրության պայմաններում սահմանափակման ենթակա չեն Սահմանադրության 28-րդ հոդվածով նախատեսված՝ երեխայի չարաշահումից, անտեսումից, բռնությունից և նվաստացուցիչ վերաբերմունքից պաշտպանվելու, ինչպես նաև ազատությունից զրկման դեպքում հատուկ պաշտպանության որոշ երաշխիքներ: Այս հանգամանքը ևս վկայում է երեխայի իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության բարձր մակարդակի մասին:

Եվրոպական երկրներից հետաքրքրական է երեխայի իրավունքների պաշտպանության Ֆրանսիայի սահմանադրաիրավական փորձը: Այսպես, կարևորելով երեխաների իրավունքների պաշտպանության հանգամանքը՝ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը 2002 թվականին ֆրանսիական իրավակարգում ճանաչեց **անչափահասների նկատմամբ արդարադատության ոլորտում հանրապետության օրենքներով ճանաչված հիմնարար սկզբունք** (*principe fondamental reconnu par les lois de la République en matière de justice des mineurs*):[9] Այս սկզբունքն ընդգրկում է փոխկապակցված մի շարք կանոններ, որոնք երաշխավորում են Ֆրանսիայում անչափահասների նկատմամբ արդարադատության պաշտպանական բնույթը և դրա գերազանցապես դաստիարակչական ու վերականգնողական նպատակաուղղվածությունը:[10]

Անչափահասների նկատմամբ արդարադատության վերաբերյալ հիմնարար սկզբունքը Սահմանադրական խորհուրդը բխեցրել է երեք օրենսդրական ակտերից,

[8] Տե՛ս Habashi J., Driskill S., Lang J., DeFalco P., "Children's Rights and the Human Development Index: A Comparative Analysis", *International Journal of Children's Rights*, 2010, էջ 268 DOI: 10.1163/157181809X12615514762046 (մուտք՝ 12.08.2026)

[9] Տե՛ս Decision No. 2002-461 dc of 29 August 2002; de Montgolfier, 2011; Darsonville, 2012 (մուտք՝ 13.08.2026)

[10] Տե՛ս de Montgolfier, J.-F. "Le Conseil constitutionnel et la justice pénale des mineurs", 23 octobre 2008, էջ 10 Official PDF, Conseil constitutionnel (մուտք՝ 13.08.2026)

որոնք համապատասխանաբար կարգավորում էին՝ քրեական պատասխանատվության տարիքը, երեխաների համար մասնագիտացված դատարանների գործունեությունը և անչափահաս իրավախախտների նկատմամբ դաստիարակչական միջոցների կիրառումը:[11]

Ինչպես արդեն տեսանք, երեխաների նկատմամբ արդարադատության ոլորտում Ֆրանսիայի սահմանադրաիրավական փորձի առանձնահատուկ նշանակությունը պայմանավորված է նաև **մասնագիտացված արդարադատության ինստիտուցիոնալացման** հանգամանքով: Սահմանադրական խորհուրդը, երեխաների նկատմամբ արդարադատության առանձնահատկությունները գնահատելով սահմանադրական պաշտպանության տեսանկյունից, ճանաչել է մասնագիտացված իրավասության և համապատասխանեցված դատական ընթացակարգերի անհրաժեշտությունը: Այս մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ անչափահասի նկատմամբ արդարադատության իրականացումը չի կարող ամբողջությամբ նույնացվել չափահաս անձանց նկատմամբ կիրառվող ընդհանուր քրեական արդարադատության հետ, քանի որ երեխայի տարիքը, անձի ձևավորման փուլում գտնվելը և վերականգնման ու վերասոցիալականացման անհրաժեշտությունը պահանջում են առանձնահատուկ իրավական մոտեցում:

Այս համատեքստում հետաքրքրական է նաև Հայաստանի Հանրապետության փորձի համադրումը ֆրանսիական մոդելի հետ: Հայաստանի դատական համակարգում առկա են մասնագիտացված դատարաններ, սակայն երեխաների և անչափահասների նկատմամբ արդարադատությունն առանձին մասնագիտացված դատարանի միջոցով չի իրականացվում: Հետևաբար, Ֆրանսիայի փորձը կարող է դիտարկվել որպես քննարկման արժանի մոդել՝ այն հարցի տեսանկյունից, թե արդյոք երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է ոչ միայն մասնագիտացված դատավորների կամ հատուկ ընթացակարգերի առկայություն, այլև երեխաների գործերով մասնագիտացված դատական ինստիտուտի ձևավորում:

[11] Տե՛ս Conseil constitutionnel, Decision No. 2002-461 DC of 29 August 2002, para. 26; de Montgolfier, J.-F., 2011, էջ 198 https://www.conseil-constitutionnel.fr/decision/2002/2002461DC (մուտք՝ 12.08.2026)

Այս առումով Ֆրանսիայի փորձը հիմք է տալիս քննարկելու Հայաստանի Հանրապետությունում երեխաների և անչափահասների մասնակցությամբ գործերի քննության առավել մասնագիտացված դատական համակարգի ձևավորման նպատակահարմարությունը, նեղ մասնագիտացված, առավել պրոֆեսիոնալ դատավորների ներգրավումը՝ այն դիտարկելով որպես երեխաների իրավունքների սահմանադրական և դատավարական պաշտպանության արդյունավետության բարձրացման հնարավոր միջոց:

Ուսումնասիրելով մի շարք երկրների փորձը՝ անհրաժեշտ է անդրադառնալ նաև ՀՀ սահմանադրաիրավական կարգավորումներին: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրությունն առաջին անգամ երեխայի իրավունքներին նվիրեց առանձին հոդված՝ 37-րդ հոդվածը, որով սահմանադրական մակարդակով ամրագրվեց երեխայի լավագույն շահի սկզբունքը: Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է. «Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում»: Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն էլ՝ «Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան»: [12]

Այսպիսով՝ ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն այլ սահմանադրական համակարգերի, որոնցում երեխաների իրավունքների պաշտպանությունը հիմնականում բխեցվում է ընդհանուր մարդու իրավունքների դրույթներից, երեխայի լավագույն շահի և երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքն ուղղակիորեն ամրագրում է սահմանադրական մակարդակում: Այս հանգամանքը երեխաների իրավունքների սահմանադրական պաշտպանության տեսանկյունից էապես բարձրացնում է դրանց իրավական նշանակությունը:

Միաժամանակ, գործող սահմանադրական և ոլորտային օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «երեխայի լավագույն շահ» հասկացությունը չունի համընդհանուր և հստակ սահմանված իրավական բովանդակություն կամ սպառիչ սահմանում: Ընդ որում՝ դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ

[12] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է՝ 1995թ. հուլիսի 5-ին՝ 2005թ. նոյեմբերի 27-ի և 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), հոդ. 37, ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (մուտք՝ 12.08.2026)

երեխայի լավագույն շահի գնահատումը չի կարող հիմնվել բացառապես վերացական կամ միասնական չափանիշների վրա. յուրաքանչյուր կոնկրետ դեպք պահանջում է երեխայի անհատական կարիքների, զարգացման առանձնահատկությունների և գործի փաստական հանգամանքների համակողմանի գնահատում:

Այնուամենայնիվ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սկզբունքի արդյունավետ կիրառման հիմնական մարտահրավերներից մեկը հենց դրա բովանդակային որոշակիության պակասն է, ինչի հետևանքով կարող են առաջանալ ինչպես գնահատման միասնական չափանիշների ձևավորման, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի հետևողականության խնդիրներ: Միևնույն իրավական սկզբունքը տարբեր մարմինների կողմից կարող է մեկնաբանվել և կիրառվել տարբեր կերպ, ինչը որոշակիորեն թուլացնում է Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված երաշխիքի գործնական արդյունավետությունը:

Այս համատեքստում, հաշվի առնելով առկա իրավագիտական ուսումնասիրությունները և ձևավորված մոտեցումները, որպես հետագա օրենսդրական կարգավորման հիմք, առաջարկվում է **«երեխայի լավագույն շահ» հասկացության մեր դոկտրինալ սահմանումը**: Մեր կողմից նախկինում իրականացված ուսումնասիրության շրջանակում առաջարկվել է այն ձևակերպել հետևյալ կերպ. **«Երեխայի լավագույն շահը պետք է ընկալվի որպես իրավական սկզբունք, որի համաձայն յուրաքանչյուր հանրային իշխանության մարմին, դատարաններ և այլ իրավասու հաստատություններ պարտավոր են կայացնել այնպիսի որոշումներ, որոնք ապահովում են երեխայի իրավունքների, արժանապատվության, անվտանգության, առողջ զարգացման, կրթության և բարեկեցության պաշտպանությունը՝ միաժամանակ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքներն ու կոնկրետ հանգամանքները»:**[13]

Նշված սահմանման օրենսդրական ամրագրումը, մասնավորապես՝ ՀՀ Ընտանեկան օրենսգրքում, կնպաստի երեխայի լավագույն շահի սկզբունքի բովանդակության հստակեցմանը, դրա կիրառման միասնական չափանիշների

[13] Տե՛ս Մանուչարյան Է., «Երեխայի լավագույն շահ» սկզբունքի միջազգային և սահմանադրաիրավական չափանիշները. բովանդակությունը և կիրառման հիմնախնդիրները», «Բանբեր Եվրասիա», 2026, № 1, էջ 39–40, DOI: 10.53614/18294952-2026.1-32 (մուտք՝ 14.08.2026)

ձևավորմանը և Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրված իրավունքի արդյունավետ իրագործմանը:

Հետևաբար, անհրաժեշտ է ոչ թե ընդլայնել սահմանադրական կարգավորումը, այլ օրենսդրորեն հստակեցնել երեխայի լավագույն շահի բովանդակությունն ու գնահատման չափանիշները՝ պահպանելով յուրաքանչյուր երեխայի անհատական հանգամանքների գնահատման պահանջը:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երեխաների իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես առանձին իրավունքների սահմանադրական ամրագրում, այլև որպես երեխային ինքնուրույն իրավունքների սուբյեկտ ճանաչելու և դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական ու ինստիտուցիոնալ երաշխիքների ամբողջություն: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989 թվականի կոնվենցիայի լայնածավալ վավերացումը վկայում է երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների համընդհանուր ճանաչման մասին, սակայն ազգային սահմանադրական համակարգերում դրանց արտացոլման եղանակներն էապես տարբերվում են:

Համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երեխաների իրավունքների սահմանադրական պաշտպանության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն համապատասխան դրույթների առկայությամբ, այլև դրանց բովանդակությամբ, պետության պոզիտիվ պարտավորությունների հստակությամբ և պաշտպանության արդյունավետ մեխանիզմների առկայությամբ: Հարավաֆրիկյան Հանրապետության, Լեհաստանի և Պորտուգալիայի փորձը վկայում է երեխաների իրավունքների ուղղակի և ընդգրկուն սահմանադրական պաշտպանության հնարավորությունների մասին, մինչդեռ Ֆրանսիայի փորձը ցույց է տալիս, որ նման պաշտպանությունը կարող է ձևավորվել նաև սահմանադրական մեկնաբանության և դատական պրակտիկայի միջոցով: Ֆրանսիական մոդելի առանձնահատուկ նշանակությունը դրսևորվում է նաև անչափահասների նկատմամբ արդարադատության մասնագիտացված մոտեցման սահմանադրական ճանաչմամբ:

ՀՀ-ում 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում երեխայի իրավունքներին նվիրված առանձին՝ 37-րդ հոդվածի ամրագրումը կարևոր քայլ էր երեխաներին որպես ինքնուրույն իրավունքների սուբյեկտներ ճանաչելու ուղղությամբ: Հատկապես կարևոր է երեխայի կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի և երեխայի լավագույն շահի առաջնահերթության ուղղակի սահմանադրական ամրագրումը:

Միաժամանակ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սահմանադրական ամրագրումն ինքնին բավարար չէ: ՀՀ-ում երեխայի լավագույն շահի սկզբունքի արդյունավետ կիրառման խնդիրներից է դրա բովանդակային որոշակիության և գնահատման միասնական չափանիշների բացակայությունը: Այս առումով նպատակահարմար է ՀՀ Ընտանեկան օրենսգրքում օրենսդրորեն հստակեցնել «երեխայի լավագույն շահ» հասկացության բովանդակությունը՝ սահմանելով դրա հիմնական բաղադրիչները, միաժամանակ պահպանելով յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների և կոնկրետ հանգամանքների գնահատման անհրաժեշտությունը: Այս օրենսդրական ձևակերպումը զերծ կպահի հանրային իշխանության մարմիններին այս սկզբունքի տարաբնույթ և երբեմն իրարամերժ մեկնաբանություններից և առավել կհեշտացնի երեխաներին վերաբերող ցանկացած հարցերի և որոշումների կայացման գործընթացը:

Միաժամանակ, երեխայի լավագույն շահի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է ոչ միայն դրա բովանդակային օրենսդրական հստակեցումը, այլև դրա կիրառման ընթացակարգային և ինստիտուցիոնալ երաշխիքների համակարգի ձևավորումը: Իրավական որոշակիության պահանջը ենթադրում է, որ երեխաներին վերաբերող որոշումների կայացման գործընթացում իրավասու մարմինների համար պետք է նախատեսվեն երեխայի լավագույն շահի գնահատման նվազագույն և փոխկապակցված չափանիշներ: Դրանց թվում կարող են ներառվել երեխայի ֆիզիկական և հոգեկան անվտանգության, առողջության, զարգացման, կրթության, ընտանեկան միջավայրի պահպանման, երեխայի ինքնուրույն կարծիքի և տարիքին ու հասունությանը համապատասխան մասնակցության, ինչպես նաև տվյալ երեխայի անհատական կարիքների և կոնկրետ հանգամանքների գնահատումը:

Միևնույն ժամանակ, միայն գնահատման չափանիշների սահմանումը բավարար չէ, եթե դրանք չեն ապահովվում համապատասխան ընթացակարգային երաշխիքներով: Այդ առումով անհրաժեշտ է երեխաներին վերաբերող որոշումների կայացման գործընթացում ապահովել երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու և այն պատշաճ կերպով հաշվի առնելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում՝ երեխայի ներկայացուցչի կամ համապատասխան մասնագետի մասնակցությունը, ինչպես նաև ընդունված որոշման պատճառաբանվածությունը: Վերջինս առանձնահատուկ նշանակություն ունի երեխայի լավագույն շահի սկզբունքի կիրառման կանխատեսելիության և դատական վերահսկողության ապահովման տեսանկյունից, քանի որ իրավասու մարմինը պետք է հիմնավորի, թե ինչ հանգամանքների գնահատման արդյունքում է տվյալ որոշումը համարվել համապատասխան երեխայի լավագույն շահին: Իրավական պաշտպանության արդյունավետությունը ենթադրում է նաև երեխաների իրավունքների խախտման կամ դրանց ոչ պատշաճ իրացման դեպքում հասանելի, մատչելի և արդյունավետ բողոքարկման ու դատական պաշտպանության միջոցների առկայություն: Հետևաբար, երեխայի լավագույն շահի սկզբունքի օրենսդրական հստակեցումը պետք է դիտարկել ոչ թե որպես ինքնուրույն իրավական միջոց, այլ որպես ավելի լայն համակարգի բաղադրիչ, որը ներառում է նյութական չափանիշների սահմանում, դրանց կիրառման ընթացակարգերի կանոնակարգում, որոշումների պատճառաբանման պարտականություն և արդյունավետ դատական կամ այլ իրավական պաշտպանության միջոցների ապահովում: Այս համատեքստում իրավական որոշակիությունը և արդյունավետ պաշտպանության մեխանիզմները հանդես են գալիս որպես փոխկապակցված երաշխիքներ. առաջինը սահմանում է երեխայի լավագույն շահի գնահատման իրավական շրջանակը, իսկ երկրորդն ապահովում է այդ շրջանակի պատշաճ կիրառման նկատմամբ վերահսկողությունը և երեխայի իրավունքների խախտման դեպքում դրանց վերականգնման հնարավորությունը: Հետևաբար, երեխաների իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության արդյունավետությունը պետք է գնահատել ոչ միայն սահմանադրական իրավունքի ձևական ամրագրման, այլև դրա օրենսդրական կոնկրետացման, ընթացակարգային

իրացման և պաշտպանության արդյունավետ միջոցների ամբողջականության տեսանկյունից:

Այսպիսով՝ ՀՀ-ում երեխաների իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության հետագա զարգացումը պետք է ուղղված լինի սահմանադրական երաշխիքների, իրավական որոշակիության, ընթացակարգային երաշխիքների և արդյունավետ պաշտպանության մեխանիզմների փոխկապակցված ամրապնդմանը: Այս համակարգում սահմանադրական դրույթները պետք է ապահովեն հիմնարար իրավական երաշխիքը, օրենսդրությունը՝ դրանց բովանդակային և ընթացակարգային կոնկրետացումը, իսկ դատական և այլ իրավական պաշտպանության միջոցները՝ դրանց արդյունավետ իրացումը և խախտված իրավունքների վերականգնումը: Միայն այս բաղադրիչների ամբողջական և փոխկապակցված կիրառումն է հնարավորություն տալիս ապահովելու երեխայի իրավունքների ոչ միայն ձևական, այլև իրական և արդյունավետ պաշտպանությունը:

POSITIVE OBLIGATIONS OF THE STATE IN THE FIELD OF CONSTITUTIONAL PROTECTION OF CHILDREN'S RIGHTS: A COMPARATIVE LEGAL STUDY

MANUCHARYAN EDGAR

Lecturer at the Chair of Law, Political Science and International Relations,
Eurasia International University; PhD Student at the same Chair
Master of European and International Law, Yerevan State University

Abstract. This article examines the principal approaches to the constitutional protection of children's rights through a comparative analysis of the experiences of several states, including the Russian Federation, Poland, Portugal, the Republic of South Africa, and France. It analyses the specific features of direct and indirect constitutional protection of children's rights, the constitutional recognition of the State's positive obligations, as well as the significance of specialized justice for children and juveniles.

Particular attention is paid to the guarantees enshrined in Article 37 of the Constitution of the Republic of Armenia concerning the best interests of the child and the child's right to express his or her views. The study substantiates the need to clarify the principle of the best interests of the child at the legislative level and to establish its substantive content and assessment criteria in the Family Code of the Republic of Armenia, with a view to enhancing the effectiveness of the protection of children's rights and ensuring greater consistency and predictability in legal practice.

Key words: children's rights, constitutional protection, best interests of the child, positive obligations, juvenile justice, specialized justice.

ПОЗИТИВНЫЕ ОБЯЗАТЕЛЬСТВА ГОСУДАРСТВА В СФЕРЕ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ ЗАЩИТЫ ПРАВ РЕБЕНКА: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ

МАНУЧАРЯН ЭДГАР

Преподаватель и соискатель кафедры права, политологии и
международных отношений Международного университета Евразия
Магистр европейского и международного права, Ереванский государственный университет

Аннотация. В статье исследуются основные подходы к конституционно-правовой защите прав ребенка на основе сравнительного анализа опыта ряда государств, в частности Российской Федерации, Польши, Португалии, Южно-Африканской Республики и Франции. Анализируются особенности прямой и косвенной конституционной защиты прав ребенка, конституционного закрепления позитивных обязательств государства, а также значение специализированного правосудия в отношении несовершеннолетних. Отдельное внимание уделяется гарантиям, закрепленным в статье 37 Конституции Республики Армения, в частности принципу наилучшего обеспечения интересов ребенка и праву ребенка выражать свое мнение. В результате исследования обосновывается необходимость законодательного уточнения принципа наилучшего обеспечения интересов ребенка, а также закрепления его содержания и критериев оценки в Семейном кодексе Республики Армения с целью повышения эффективности защиты прав ребенка и обеспечения последовательности и предсказуемости правоприменительной практики.

Ключевые слова: права ребенка, конституционно-правовая защита, наилучшее обеспечение интересов ребенка, позитивные обязательства, правосудие в отношении несовершеннолетних, специализированное правосудие.

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին, փոփոխություններով՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ի և 2015 թվականի դեկտեմբերի 6-ի), ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (մուտք՝ 12.08.2026) :
2. Մանուչարյան Է., «Երեխայի լավագույն շահ» սկզբունքի միջազգային և սահմանադրաիրավական չափանիշները. բովանդակությունը և կիրառման հիմնախնդիրները», «Բանբեր Եվրասիա», 2026, № 1, էջ 39–40, DOI: 10.53614/18294952-2026.1-32 (մուտք՝ 14.08.2026):
3. Конституция Российской Федерации от 12 декабря 1993 г. (с изменениями и дополнениями), Российская газета, 25 декабря 1993 г., № 237 "Конституция Российской Федерации" (принята всенародным голосованием 12.12.1993 с изменениями) \ КонсультантПлюс (մուտք՝ 10.08.2026):
4. Constitution of the Portuguese Republic, adopted on 25 April 1976, Article 69, official text, Assembly of the Republic of Portugal https://www.parlamento.pt/Legislacao/Paginas/ConstituicaorepublicaPortuguesa.aspx (մուտք՝ 10.08.2026):
5. Constitution of the Republic of Poland, adopted by the National Assembly on 2 April 1997, Article 72, official text, Sejm of the Republic of Poland https://www.sejm.gov.pl/prawo/konst/angielski/konse.htm (մուտք՝ 10.08.2026):
6. Constitution of the Republic of South Africa, 1996, Article 28, official text, Government of the Republic of South Africa https://www.gov.za/documents/constitution/constitution-republic-south-africa-1996-04-feb-1997 (մուտք՝ 12.08.2026):
7. Conseil constitutionnel, Décision n° 2002-461 DC du 29 août 2002, para. 26, Conseil constitutionnel, texte officiel, https://www.conseil-constitutionnel.fr/decision/2002/2002461DC (մուտք՝ 13.08.2026):
8. de Montgolfier J.-F., «Le Conseil constitutionnel et la justice pénale des mineurs», 23 octobre 2008, p. 10, Conseil constitutionnel, document électronique officiel https://www.conseil-constitutionnel.fr/sites/default/files/as/root/bank_mm/pdf/Conseil/justice_penale_des_mineurs_jfm.pdf (մուտք՝ 13.08.2026):
9. de Montgolfier J.-F., «Le Conseil constitutionnel et la justice pénale des mineurs», *Les Nouveaux Cahiers du Conseil constitutionnel*, 2011/4, № 33, էջ 195–207 https://www.conseil-constitutionnel.fr/decision/2002/2002461DC (մուտք՝ 12.08.2026):
10. Darsonville A., «QPC du 21 septembre 2012 : la poursuite de la désagrégation du droit pénal des mineurs», *Constitutions*, octobre-décembre 2012, № 2012-4, էջ 609–615, https://www.legifrance.gouv.fr/jorf/id/JORFTEXT000026395318 (մուտք՝ 13.08.2026)
11. .
12. Habashi J., Driskill S., Lang J., DeFalco P., "Constitutional Analysis: A Proclamation of Children's Right to Protection, Provision, and Participation", *The International Journal of Children's Rights*, Vol. 18, No. 2, 2010, էջ 267–290, DOI: 10.1163/157181809X12615514762046 (մուտք՝ 12.08.2026) :
13. O'Mahony C., "The Promises and Pitfalls of Constitutionalizing Children's Rights", in: Dwyer J. G. (ed.), *The Oxford Handbook of Children and the Law*, Oxford: Oxford University Press, 2020, էջ 871–896 https://doi.org/10.1093/oxfordhb/9780190694395.013.40 (մուտք՝ 09.08.2026):
14. O'Mahony C., "Why Children Should Have Constitutional Rights of Their Own", *International Journal of Constitutional Law*, Vol. 23, Issue 2, 2025, էջ 372–404, DOI: 10.1093/icon/moaf034 (մուտք՝ 12.08.2026):
15. United Nations, *Convention on the Rights of the Child*, United Nations Treaty Series, Vol. 1577, 1989, p. 3, available at: Office of the United Nations High Commissioner for Human Rights (OHCHR), https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-rights-child (մուտք՝ 09.08.2026):